



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

58, 59, 60, 61,  
62, 63, 64, 65,  
66, 67, 68, 69, 70,  
71, 72, 73, 74, 75

2  
L-85

2010



# ԼՍԱՐԱՆ

2

ՀՈԳԵՇԱՀ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

Ք Ա Ր Ո Ջ

ՏՕՆԱԿԱՆ

Ի ԽՈՐՀՈՒՐԴ ԱԻԱԿ ՀԻՆԿԵԱԲԱԹՈՒՆ.

Տպագրեալ

Հրամանաւ Վեհափառ Տեառն

ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳՍՑ Դ,

Աստուածընտիր Կաթողիկոսի Ամենայն Հայոց.



Ի ԹԷՌԴՈՍԻԱ,

Ի Տպարանի Խաչիպեան Ուսումնարանին.

1869 = ԹՅԺԸ.

11


3

28425-43

«Եթէ կրնաս ձայնդ բարձրացնել, խօսէ: Եթէ  
զիրք միայն թողուն քովդ, գրէ: Փողոցին մէջ քա-  
րի մը վրայ կանգնած՝ քարոզէ, եթէ կրնաս. եթէ  
հրապարակական կեանքը փակ է, տանդ մէջ բան  
սովեցուր: Եթէ ձայն չունիս, օրինակ աւուր կա-  
րողութիւն ունիս: Այս ոչ առաքինութիւն է, ոչ  
կարգէ դուրս գործողութիւն. այլ պարտք է՝ պարզ  
ու յստակ: Աշխարհիս մէջ Աստուծոյ կողմանէ ա՛յն  
եղիր՝ ինչ որ է բժիշկը մարմնոյ հիւանդութեանց  
համար. բժիշկը պարտական է հասնելու ամենայն  
ցաւագարաց, եւ դու պիտի հասնիս ամենայն տգի-  
տաց: Քու Ստեղծողդ կենացդ համարը պիտի պա-  
հանջէ քեզնէ: Յոյսդ մի՛ դներ բացասական առա-  
քինութեան վրայ, որ միայն ուրիշի վնաս չընելն է.  
քեզի օրէնք տրուած է որ հասարակաց գործոյն  
համար աշխատիս, եղբարքդ սիրես, լուսաւորես,  
մխիթարես, ազատես մոլութենէ ու մոլորութենէ,  
եւ առ Աստուած առաջնորդես: Կեանքն ալ այս է,  
մարդն ալ այս»:

ԺԻՒԼ ՍԻՄՈՆ,

(Կմաստատէր եւ Գաղաքադէս վարդապետի:)



11415-54

Дозволено Цензурою: Тифлисъ, 30 Октябри 1868 г.

Ի ԽՈՐՀՈՒՐԳ

Ա Ի Ա Գ Հ Ի Ն Գ Շ Ա Բ Ա Թ Ո Ի Ն



Րիստոսի Տեառն մերոյ փրկագործ  
չարչարանքը, խաչելութիւնն ու  
թաղումը տօնուած օրերուս մէջ ա  
մենէն Հանդիսաւորն է Աւագ Հինգ-  
շաբթին, յորում երեք խորհրդա-  
ւոր ու գեղեցիկ արարողութիւններ կկատարուին Հետ  
զհետէ, ու բարեպաշտ քրիստոնէից ջերմեռանդու-  
թիւնը կվառեն կրորդքին: Այս արարողութեանց ա-  
ռաջինն է՝ ամենասուրբ Հաղորդարեան խորհրդոյն  
Հիմնաւորիլը ի Քրիստոսէ Փրկչէն մերմէ, Երկրորդն  
է Ապաշխարողաց արձակեան Հին եւ պատկառելի արա-  
րողութիւնը, եւ երրորդը Ոսկարայի գեղեցիկ եւ  
խրատական արարողութիւնը:

Տեսնեմք ուրեմն թէ ինչպէս կրնամք այսօրուան  
քարոզիս մէջ պարզել ու բացատրել այս երեք արա-  
րողութեանց պատմութիւնն ու խորհուրդները:

Առաւօտեան ժամերգութեան շարականներուն, սաղմոսներուն եւ ընթերցմունքներուն բոլոր խօսքերը՝ սուրբ Հաղորդութեան խորհրդոյն, եւ Քրիստոսի Տեառն մերոյ իւր առաքելոց ոտքերը լուսնալուն կվերաբերին: Օրինակի համար, շարականին երեք տունը մէջ բերեմք.

« Քրիստոս Աստուած, որ վասն մեր խոնարհեցար ի կամաւոր չարչարանս, լուացեր զոտս աշակերտացն այսօր ի սուրբ վերնատունն. աղաչեմք փրկիչ, ողորմեա՛ :

« Որ կազմեցեր սեղան խորհրդոյ, եւ արբուցեր յանմահական բաժակէն սրբոց քոց առաքելոց այսօր ի սուրբ վերնատունն. աղաչեմք փրկիչ, ողորմեա՛ :

« Մաքրեա զմիտս եւ զխորհուրդս՝ զի եւ մեք հաղորդեսցուք սրբութեամբ ընդ սրբոց քոց առաքելոց այսօր ի սուրբ վերնատունն. աղաչեմք փրկիչ, ողորմեա՛ »:

Ասոնց նման գեղեցիկ ու սրտաշարժ են այսօրուան շարականներուն ամէն տուներն ալ, եւ տարակոյս չկայ որ ժամասէր քրիստոնեան ոչ միայն կհասկընայ այն պարզ գրաբառ լեզուով գրուած խօսքերը, այլ եւ կզմայլի՝ անոնց խորհրդաւոր նշանակութիւններուն խելամուտ լինելով:

Երեկուան քարոզին մէջ պատմեցինք՝ սուրբ աւետարանին խօսքերը մեկնելով՝ թէ Քրիստոս Տէրն մեր ինչ կերպով եւ ինչ խօսքերով հաստատեց սուրբ Հաղորդութեան եւ Պատարագի խորհուրդը, եւ թէ

ինչպէս ապսպրեց առաքելոց եւ նոցա յաջորդներուն՝ որ նոյն խորհուրդը միշտ կատարեն, իրեն յիշատակը անմուռանալի պահելու համար. « Զայս արարէք առ իմոյ յիշատակի »: Այսօր տեսեմք նախ՝ թէ Քրիստոսի սուրբ եկեղեցին ինչպէս կկատարէ այս խորհուրդը, եւ ինչ նշանական արարողութիւններ կբանեցընէ. թէ ինչ է սուրբ Հաղորդութիւնը, եւ ինչ է սուրբ Պատարագը:

Սուրբ Հաղորդութիւն կատարելի Քրիստոսի Տեառն մերոյ փրկագործ մարմինն ու արիւնը, որ իրօք ներկայ են ընդ տեսակօք հացի եւ գինւոյ, զօրութեամբ Քրիստոսի այն խօսքերուն որ կասէ պատարագիչ քահանայն հացին կամ նշխարին վերայ, « Առէք կերայք, այս է մարմին իմ », եւ գինւոյն վերայ, « Արբէք ի սմանէ ամենեքեան, այս է արիւն իմ՝ նորոյ ուխտի »: Եւ հաղորդութիւն աստուածային պատճառը այն է որ անոր ճաշակմամբը հաղորդ՝ այսինքն մասնակից կլինին քրիստոնեայք աստուածային խորհրդոյն, կըմիանան սրբութեամբ ընդ Քրիստոսի, եւ կկապուին սուրբ սիրով ընդ միմեանս:

Գրոց մէջ սովորութիւն է անուանել այս խորհուրդը նաեւ Սրբութիւն, իբրեւ արդար եւ սուրբ բան եւ ամենասուրբ, եւ միանգամայն պատճառ սրբութեան անոնց՝ որ արժանապէս կմտենան հաղորդուելու: Այս մտքով գրուած է նաեւ Տօնացուցին մէջ թէ « եւ զնի սրբութիւնն ի բազմոցի »: Վասն զի գրեթէ ամէն մեծ տօներուն՝ գիշերային ու առաւօտեան ժամերգութեան ժամանակ՝ սրբութիւնը

կգրուի աւագ սեղանոյն վերայ՝ զարգարուն ծածկոցով ծածկուած, եւ երկու կողմն ու առաջը կերտններ կվառին:

Սուրբ Հաղորդութեան նիւթն է հաց եւ գինի, ինչպէս որ ասինք. բայց ամենայն քրիստոնեայք հացն ու գինին նոյն կերպով չեն առնուր ի նիւթ սուրբ խորհրդոյս: Յոյնք եւ Ասորիք եւ Դիախք խմորուն հաց կբանեցընեն. իսկ մեր եկեղեցին եւ լատինացւոցը անխմոր՝ բաղարջ կգործածեն: Մեր սուրբ Հայրապետը ներսէս Շնորհալի զօրաւոր ապացոյցներով կհաստատէ ու կգովէ անխմոր հացով՝ այսինքն բաղարջով պատարագելու սովորութիւնը, աւելի այս բանիս վրայ հիմնուելով որ Քրիստոս Տէրն մեր այսօրուան օրս բաղարջը օրհնեց, եւ զայն փոխարկեց ի մարմին իւր. վասն զի զաակի օրերը խմոր չէր գտնուեր Հրէից տանը մէջ. ուստի տարակոյս չկայ որ նաեւ ի վերնատան խմորուն հաց չէր սեղանին վրայ եղածը, այլ լոկ բաղարջ: — Նմանապէս գինին մեր սուրբ եկեղեցին ի սկզբանէ հետէ անապակ եւ անխառն կբանեցընէ, որովհետեւ պարզապէս գինի ասուած է աւետարանին մէջ. իսկ Յոյնք եւ Լատինք ջուր կխառնեն մէջը՝ պէսպէս խորհրդաւոր նշանակութիւններ տալով իրենց սովորութեանը: — Հարկաւոր գիտելիքն այս է որ ամենայն խոհական աստուածաբանք կհաստատեն՝ թէ այս տարբերութիւնները սոսկ արարողական բաներ լինելով, խորհրդոյն էական յատկութեանցը վրայ ամենեւին ազդեցութիւն պիտի չունենան, եւ տարաձայնութեան պատ-

ճառ պէտք չէ լինին քրիստոնէից, եւ ոչ աւելի հակառակութեան եւ թշնամութեան ի մէջ ազիտաց: Ինչպէս ահա եւ Շնորհալին կասէ. «Թէպէտ եւ, ինչպէս վերն ասինք, այն ժամանակն որ Տէրն մեր իւր խորհուրդը աւանդեց՝ բաղարջի վրայ կատարեց զայն, բայց առաքելոց աւանդութիւնները յայանի կերպով չեն ցուցըներ մեզի թէ եկեղեցւոյ առաջին ժամանակները անխմոր հաց կգործածուէր թէ խմորուն: Այն միջոցին այդ միայն էր հրամանը որ հաւատացեալք հաց նուիրեն, եւ անոր վրայ կկատարուէր խորհուրդը: Ասոր համար, եթէ հոգւոց շահը կամ օգուտը անոր վրայ հաստատուած լինէր որ իբր թէ մէկ հացը հաճոյ է Աստուծոյ եւ մէկալը անհաճոյ, այն ատեն կամ նոյն իսկ եկեղեցւոյն ձեռքովը, կամ առաքելոց ձեռքովը, կամ թէ սուրբ վարդապետաց խօսքերովը յայանուած կլինէր: Բայց մեք հաստատ գիտեմք որ Աստուծոյ ուրիշ բան այնպէս հաճոյ չէ՝ ինչպէս ուղղափառ հաւատք եւ անարատ վարք: Ուստի բաւական է որ մաքուր գիտաւորութեամբ, եւ ոչ թէ հերձուածողական կարծիքներով մը կատարուի խորհուրդը. իսկ այսպիսի աւանդութիւնները աւելի մասնաւոր սովորութիւնք են այս կամ այն ազգի, եւ անոնցմով հաւատքը ոչ կաւելնայ եւ ոչ կպակսի: Երբոր գլուխը, այսինքն հաւատքը, միանայ ու կապուի ընդ գլխոյն մերոյ Քրիստոսի, այն ատեն անդամներն ալ, այսինքն աւանդութիւնները վայելչապէս կներգործեն եւ կհաճոյանան միմեանց ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ»:

Պատարագի խորհուրդն ալ այսօր հաստատեց Քրիստոս, վասն զինոյն սուրբ հաղորդութիւնը՝ այսինքն իւր աստուածային մարմինն ու արիւնը՝ նուիրեց Հօր Աստուծոյ իբրեւ զսհ եւ զենուան, եւ կրկնութիւն այն պատարագին զոր ինքը՝ ճշմարիտ քահանայապետն մեր Քրիստոս՝ մատոյց ի վերայ սուրբ Խաչին։ Այժմ՝ այս պատարագի խորհուրդն ալ գրեթէ ամենայն գլխաւոր եկեղեցիք քրիստոնէից մէկ մէկ կերպով կկատարեն. բայց էական արարողութիւնները ամէնքն ալ միակերպ պահպանած են։ Մեր Հայաստանեայց եկեղեցւոյ պատարագամատոյցը շատ նման է Երուսաղեմայ եկեղեցւոյն այն պատարագամատուցին որ Յակոբոս առաքեալը շարագրած է կասեն. բայց շատ կարելի է կարծել՝ թէ նախ առաջին լուսաւորիչքն մեր Թագէոս եւ Բարթողիմէոս առաքեալք սովրեցուցած էին իրենց աշակերտացը պատարագ մատուցանելու համար հարկաւոր ճանչցուած աղօթքներուն գլխաւորները. սուրբ Լուսաւորիչն մեր Գրիգոր այն աղօթքներուն վրայ ուրիշ մէկ քանի աղօթքներ ալ աւելցուց. յետոյ երանելի թարգմանիչքն մեր՝ Յովհաննու Ոսկեբերանի եւ Մեծին Բարսղի պատարագամատոյցներէն շատ բան առնելով՝ այնպէս զարգարեցին որ եւրոպացի գիտունները իրաւամբ կզմայլին մեր պատարագի կարգաւորութեան եւ արարողութեանց վրայ։ Երանի մեր ազգայնոց՝ եթէ սուրբ պատարագին խորհրդոյն զօրութիւնն ալ ըստ արժանւոյն հասկընան, եւ եկեղեցականները պարտուպատշաճ ջերմեռանդութեամբ՝ կատարեն զայն,

եւ աշխարհականները առաջիկայ գտնուին անոր, եւ շնորհքները վայելեն։

Հին ատենը սովորութիւն էր եկեղեցւոյ՝ որ ապաշխարողները բոլոր աղուհացից մէջ եկեղեցիէն դուրս, կամ բուն տաճարէն դուրս՝ եկեղեցւոյ գաւիթը կկենային, ու անկից մտիկ կանէին ժամերգութիւններն ու պատարագը։ (Այսպիսի գաւիթ է, օրինակի համար, Թէոգոսիոյ սուրբ Սարգիս եկեղեցւոյն հիւսիսային բաժանումը, որոյ նմանն ունին նաեւ Հայաստանի հին եկեղեցիներուն շատը։) Այս ապաշխարողներն անոնք էին որ իրենք զիրենք մեծ մեղքի տէր ճանչնալով ու խոստովանելով, եպիսկոպոսին կամ քահանային հրամանովը այսչափ ամիս կամ այսքան տարի հրապարակական ապաշխարութիւն կանէին։ Այս կերպով եկեղեցիէն դուրս կեցողները երկար երկար ծոմապահութիւններ, հսկումներ, երկըրպագութիւններ անելէն զատ, ներս մանողներէն ու ելնողներէն ալօթք եւ միջնորդութիւն կխնդրէին լալով եւ արտասուօք, որպէս զի Աստուած ողորմի ու թողութիւն շնորհէ իրենց մեղքերուն։ Շատ հաւանական է որ ասկից մնացած է շատ տեղ մեր ազգին մէջ այն գովելի սովորութիւնը, որով եկեղեցիէն դուրս ելլողները մէկզմէկ ողջունելու կերպով կասեն, « Ողորմի Աստուած »։—Առաջին կարգի ծանր ապաշխարանքները կատարելէն ետեւ՝ կմանէին եկեղեցւոյ գաւիթը, եւ ուր որ գաւիթ չկար՝ դրանք մօտ կկենային այսքան ժամանակ. այնուհետեւ երրորդ կարգի ապաշխարող կլինէին եւ ուրիշ հաւա-



տացելոց հետ աղօթքի կկենային եկեղեցւոյ ներսը .  
բայց սուրբ պատարագին ժամանակը՝ վերաբերումէն  
առաջ դուրս կենէին . ինչպէս որ մինչեւ ցայժմ  
կքարողէ սարկաւազը այն միջոցին թէ «Մի ոք յե-  
րեխայից, մի ոք ի թերահաւատից, եւ մի ոք յապաշ-  
խարդաց եւ յանախից մերձեցցի յաստուածային խոր-  
հուրդս» . — Ո՛վ որ երախայ է, այսինքն դեռ չմկր-  
տուած հաւատացեալ, ո՛վ որ թերահաւատ է, ո՛վ որ  
ապաշխարող է ու մեղքերէն չէ մաքրուած, թող  
չմօտենայ աստուածային խորհրդոյս : — Աւելի թեթեւ  
ապաշխարանքի տակ եղողներուն ալ վերաբերումէն  
եաքը՝ Ողջունին ժամանակը կպատուիրէ սարկա-  
ւազը թէ «Որք ոչ էք կարողք հաղորդիլ աստուա-  
ծային խորհրդոյս՝ առ դրունս ելէք եւ աղօթեցէք» .  
— Ո՛վ որ կարող չէ, այսինքն արժանի չէ այս աս-  
տուածային խորհրդոյս մասնակից լինելու, հաղոր-  
դուելու, թող դուրս ելնէ ու այնտեղ անէ աղօթքը :  
Յետոյ ներսը կեցող պաշտօնէից կքարողէ թէ «Ըզ-  
դրունս, զդրունս ամենայն իմաստութեամբ եւ զգու-  
շութեամբ» . — այսինքն Դռները, դռները փակեցէք  
հանդարտութեամբ եւ ամենայն զգուշութեամբ, որ  
անարժանները ներս չմտնեն ահաւոր խորհրդոյն կա-  
տարման ժամանակը :

Այս կերպով պահեր է ահա եկեղեցին այն հին՝  
առաքելական՝ պատկառելի սովորութեան խօսքերն  
ու արարողութիւնները՝ ոչ միայն Պաատարագին մէջ,  
այլ եւ այսօրուան ժամերգութեան մէկ մասին մէջ,

որ է Ապաշխարդաց արձակումը . անոր համար մեր մէջ  
սովորութիւն եղած է շատ տեղ Արձակման օր անուա-  
նել պարզապէս այս աւագ հինգշաբթին : Նոյն արա-  
րողութիւնը կկատարեն այսօր նաեւ Յոյնք եւ Լատինք  
եւ Ասորիք, թէպէտ եւ հրապարակական ապաշխա-  
րութիւնը նոցա մէջէն եւս վաղուց վերցուած է :  
Վասն զի հին ատենը, այսինքն մինչեւ հինգերորդ,  
վեցերորդ ու եօթներորդ դարերը, բոլոր հրապա-  
րակական ապաշխարողները այսօրուան օրս մեծ հան-  
դիսով արձակում կընդունէին, եկեղեցի կմտնէին,  
ու սուրբ պատարագին վերջերուն կհաղորդուէին :  
Այն հաստատուն ջերմեռանդութեանց պաղելովը՝  
հետզհետէ դադրեցան ամէն տեղ նաեւ հին հրապա-  
րակական ապաշխարութիւնները, եւ մնաց միայն ա-  
ռանձնական խոստովանութիւնն ու ապաշխարութիւ-  
նը . բայց մեր ազգին մէջ հրապարակական խոստո-  
վանութեան իբրեւ մէկ մնացորդը կամ շուքը կարե-  
լի է համարել այն սովորութիւնը՝ որով աւելի աղուհա-  
ցից մէջ, մանաւանդ ժամերգութեան կամ պատարագի  
սկիզբն կասուի ծունկի վերայ եկեղեցւոյ մէջ «Մեզայ  
ամենասուրբ երրորդութեան» զյջական ձեւը : Եւ  
թէպէտ այս ձեւին խօսքերը իրենց ռամկական կեր-  
պերովը կցուցընեն յայանապէս որ չօրս հինգ հա-  
րիւր տարիէն աւելի հին չէ ասոր շարագրուածքը,  
բայց որովհետեւ ամէն տեղ ընդունելի եղած, եւ հա-  
ւատացելոց ախորժելի ջերմեռանդութիւն մի դար-  
ձած է, ցանկալի է որ ըստ կարի պահպանուի եւ  
վայելչապէս կատարուի :

Գամբ արձակման կարգը եւ արարողութիւնը համառօտ կերպով բացատրելու :

Երրորդ ժամուն, այսինքն կէսօրէն երեք ժամի չափ առաջ կհասնաքուի ժողովուրդը եկեղեցին, եւ սեղանին վարագոյրը փակ կգըտնեն. կամ թէ եկեղեցւոյ տաճարին դռները փակ լինելով՝ գաւիթը կը ժողովուին, եւ կասեն ձաշու ժամին առաջին մասը. յետոյ վեց գուրդայ սաղմոս կասեն, — ամէն գուրդան երեք երեք սաղմոս, — որոց խօսքերն ընդհանրապէս ապաշխարութեան խօսքեր են :

Սաղմոսներէն վերջը կասուի երեք անգամ այն աղօթքը որ Յովնան մարգարէն ասած է կէս ձկան փորուն մէջ եղած ժամանակը, եւ աղէկ կբացատրէ մեղաւորին այն խեղճութիւնը որ կբաշէ՝ քանի որ մեղքով կապուած է, եւ ապաշխարութեամբ արձակում չէ առած :

\* Ի նեղութեան իմում եւ առ Տէր կարդացի, եւ լուսն Աստուած յանդնոց դժօխոց աղաղակի իմում. լուր Տէր ձայնի իմում : —

Իմ նեղութեանս ատենը՝  
Ձայնս առ Աստուած վերուցի,  
Դըժօխքի խոր անգունդէն  
Իմ Արարչիս գիմեցի,  
Ո՛վ Տէր, ասի, ձայնըս լըսէ,  
Նեղութենէս զիս ազատէ :

\* Զի ընկեցեր զիս ի խորս ծովու, եւ շրջանք գետոց պաշտրեցին զիս : —

Դուն զիս առիւր ձրգեցիր  
Ծովուն խորունկ տեղերը,  
Չորս բոլորս պատեցին  
Գետերուն յորձանքները :

\* Ամենայն գրօսանք քո եւ ալիք քո անցին ի վերայ իմ, եւ ասացի՝ քէ մերժեցայ ուրեմն յերեսաց աջաց քոց : —

Քու մեծամեծ ալիքներըդ  
Գըլխէս անցան վեր ու վեր,  
Ուրեմն ասի՝ մեղք ինձի,  
Տիրօջս աչքէն եմ ընկեր :

\* Արդ իցէ քէ յանկից հայել ի տաճար սուրբ քո. զի հեղան զինեւ ջուրք մինչեւ յանձն իմ, եւ անդունդք անհնարինք պաշարեցին զիս : —

Արգետք նորէն բաղդ կունենամ  
Սուրբ տաճարդ տեսնելու.  
Բոլոր մարմնով ջըրի մէջ եմ,  
Ճար մի չունիմ՝ ելնելու :

\* Եմօտ գլուխ իմ փապարս լերանց. իջի եւ ի խորս երկրի, եւ տեսի զնիզս նորս, զի կին որպէս ախք յախտենից. եւ եցեն յապականութենէ կեանք իմ : —

Լեռներու ծաղկերուն մէջ  
Գընաց մըտաւ գըլուխըս.  
Երկրիս խորերն եկայ ինձայ,  
Նիգեր տեսան աչքերըս,  
Ամէն մէկը անշարժ փականք.  
Այս տեղս ինձ մահ է՝ ոչ թէ կեանք :

« Առ. քեզ Տէր Աստուած իմ, ի եռադէպ հոգւոյ իմոյ կարգացի, եւ զքեզ Տէր յիշեցի. եւ մտցեն աղօթք իմ ի տաճար սուրբ քո: —

Հոգիս բերանս որ եկաւ՝

Ահա առ քեզ կըզիմեմ՝

Քու խօսքերդ ու ողորմութիւնդ

Ահա միտքըս կըբերեմ.

Երանի թէ ազօթքս ելնէ բարձրանայ,

Քու ցանկալի սուրբ տաճարէդ ներս մտնայ:

« Զի ոչք պահէին զունայնութիւն եւ զստութիւն՝ յողորմութեան իւրեանց մերժեցան: —

Որոնց որ խեղքը միտքն է

Ունայն ու սուտ բաներու,

Նոքա են որ արժանի չեն

Ողորմութիւն գտնելու:

« Այլ ես ի ձայն օրհնութեան խոստովան եղեց քեզ. մատուցից պատարագ Տեառն, եւ կատարեցից զուխտ իմ ի փրկութեան: —

Իսկ ես թէ որ փրկելուիմ,

Փառք գոհութիւն տամ քեզի,

Զոհեր անեմ՝ ուխտ կատարեմ,

Միշտ օրհնութիւն տամ քեզի:»

Այս ազօթքէն ետեւ ամէն մէկ անգամուն կատուի նոյնպէս ապաշխարողաց բերնէն երեք անգամ ողբաձայն այս շարականը, « Զարհուրեալ գողացաւ ամենամեղ անձն իմ յահեղքոց գատաստանաց, յաներելի տանջանաց ». — Սարսափելով կգողամ քանի որ կմտածեմ քու ահաւոր գատաստանդ, ու վերջ չունեցող տանջանքները:

« Քանզի կամաւ մերձեցայ ի մեզս մեծամեծս. արդ կայ եւ մնայ ինձ աններելի պատուհասն ». — Վասն զի ես իմ կամօքս մեծամեծ մեղքերու մէջ ընկայ. ուստի անշուշտ պահուած է ինձի աններելի պատիժն ու պատուհասը:

« Արգ անկեալ ազաչեմ, Փրկիչ եւ բարերար. խնայեա յիս ի մեղուցեալս, եւ ողորմեա ինձ բազմամեղիս ». — Երեսի վերայ ընկած կաղաչեմ, ո՞վ բարերար Փրկիչ. խնայէ ինձ մեղաւորիս, ողորմէ ինձ բազմամեղիս:

Յետոյ նոյնպէս երեք անգամ՝ ուրիշ երեք տուն շարականներով՝ կասուի « Տէր ամենակալ » զղջական ազօթքը: Այս ազօթքը շարագրած է Մանասէ թագաւորը՝ իւր զղջումի եկած ու ապաշխարած ժամանակը: Վասն զի իւր հօրը Եգեկիա թագաւորին բարեպաշտութենէն հեռանալով, ինքզինքը ամէն տեսակ անկարգութեան ու կռապաշտութեան տուաւ. մինչեւ Աստուծոյ տաճարին մէջ կուռքեր դրաւ, պաշտեց, ու ժողովրդեան պաշտել տուաւ. շատ անմեղ արիւններ ալ թափեց: Եսայի Մարգարէն (որ ըստ ոմանց՝ Մանասէի աներն էր) անաչառ կերպով երեսին կզարնէր նորա անօրէնութիւնները եւ կյորդորէր որ դարձի գայ. բայց նա ոչ միայն մտիկ չարաւ նորա խօսքերուն, այլ եւ սպաննեց զինքը՝ մէջքէն սղոցով երկու կտոր անելով: Քոստուերկու տարի այսպէս ամբարշտութեամբ թագաւորութիւն քշելէն ետեւ՝ գերի ընկաւ Ասորեստանեայց թագաւորին ձեռքը, որ բռնեց Մանասէն շղթայի զարկաւ ու տա-

րաւ Բարիլոն: Այն տեղը Մանասէին խելքը գլուխն եկաւ, ճանչցաւ իւր մեղքերուն ծանրութիւնը, զզջացաւ ու ապաշխարեց. Աստուած ալ ընդունեցաւ նորա ապաշխարութիւնը, եւ գութ ձգեց Ասորեստանեայց թագաւորին սիրտը որ արձըկէ Մանասէն: Դարձաւ զզջացեալ թագաւորը Երուսաղէմ, ու որչափ որ կարելի էր շտկեց իւր արած վնասներն ու տուած գայթակղութիւնները: Եւ ահա այս «Տէր ամենակալ» աղօթքը նորա շարագրածն է կասեն՝ Բաբելոնի մէջ բանտը կեցած ժամանակը: Եւ թէպէտ Աստուածաշնչին ուրիշ կանոնական կտորներէն դուրս է այս աղօթքը, բայց Յունաց, Ասորեոց եւ մեր ժամագլխին մէջ միշտ գանուած է, եւ աղուհացից մէջ առաւօտեան եւ ճաշու ժամերուն կասուի: Ուստի օգտակար կհամարիմք այս տեղ անոր պարզ աշխարհաբառ թարգմանութիւնը՝ անել որ գրաբառը լաւ չըհասկըցողներն ալ աղօթքին խօսքերը հասկընան ու համն առնուն.

«Ո՛վ ամենակարող Տէր, ո՛վ Աստուած Աբրահամու, Իսահակայ, Յակոբայ եւ նոցա զաւակներէն արդարներուն, ամենակալ Տէր, թողութիւն տուր իմ մեղքերուս:

«Դուն ստեղծեցիր երկինքն ու երկիրս՝ իրենց ամէն զարդարանքովը. ամենակալ Տէր, եւ այլն:

«Դուն քու մէկ հրամանովդ՝ մէկ խօսքովդ ծովը կապեցիր. անդունդին բերանը փակեցիր, ու քու սուրբ եւ ահաւոր եւ փառաւորեալ անունովդ կնքեցիր. ամենակալ Տէր:

«Ամէն բան կսարսափի ու կդողայ քու ահաւոր զօրութեանդ առջեւը. ամենակալ Տէր:

«Բու սրբութեանդ ու մեծավայելուչ փառացիչափ եւ սահման չկայ. եւ շատ սաստիկ է քու ըսպառնալից բարկութիւնդ մեղաւորաց վերայ. բայց եւ ողորմութեանդ տուած ուրախութեանը մարդու խելք չհասնիր. ամենակալ Տէր:

«Դու Տէր՝ բարձրեալ ես, գթած ես, երկայնամիտ ու բազումսրբոյ՛մ ես, մարդկանց քաջած խեղճութեանը վերայ կգըթաս. ամենակալ Տէր:

«Դուն, ո՛վ Տէր Աստուած, ապաշխարութիւնը չըգրիր արդարներուն համար, Աբրահամու, Իսահակայ եւ Յակոբայ համար, որ քեզի դէմ՝ չմեղանչեցին. ամենակալ Տէր:

«Հապա ինձի պէս մեղաւորին համար դրիր ապաշխարութիւնը. վասն զի ծովու աւազին պէս շատ են իմ՝ մեղքերս ու չափազանց են իմ անօրէնութիւններս. ամենակալ Տէր:

«Այնքան է իմ անօրէնութեանցս շատութիւնն որ արժանի չեմ՝ աչքս վեր վերցընելու եւ երկնքի բարձրութիւնը տեսնելու. ամենակալ:

«Երկրիէ շղթաներուն ծանրութենէն մինչեւ գետին ծռեր կչարչարուիմ, ու ամենեւին հանգստութիւն չունիմ. ամենակալ Տէր:

«Գիտեմ որ սաստիկ բարկացուցի զքեզ, եւ աչքիդ առջեւը՝ մեծամեծ չարութիւններ դործեցի. կուռք կանգնեցի, եւ բարկութիւնդ շարժելու համար շատ մեղքեր արի. ամենակալ Տէր:

« Այժմ ահա, սով Տէր, սրտովս ծունկի վերայ կուգամ առջեւդ, եւ քու քաղցր մարդասիրութեանէդ կ'ինդրեմ. ամենակալ Տէր:

« Մեղայ, Տէր, մեղայ, եւ իմ անօրէնութիւններս ես ինձնէ գիտեմ. ամենակալ Տէր:

« Կաղաչեմ կալալատիմ քեզի, թող ինձի Տէր՝ թող ինձի, եւ մի կորսընցըներ զիս՝ ինչպէս որ արժանի եմ անօրէնութեանս համար. ամենա:

« Մինչեւ վերջը մի բարկանար ինձի Տէր, եւ իմ արած չարութիւններս մի յիշեր, ու զիս մի դատապարտեր անոնց հետ որ չարաչար կ'կորսուին՝ կընկղմին երկրիս տակը. ամենակալ Տէր:


« Վասն զի դուն, Տէր Աստուած, ապաշխարողաց Աստուածն ես. ուստի իմ վրաս ալ ցուցուր քու բարերարութիւնդ, թէպէտ եւ ես արժանի չեմ. ամենակալ Տէր:

« Կենդանացուր ու փրկէ զիս քու անբաւ ողորմութեամբդ, եւ ես կ'օրհնեմ զքեզ բոլոր կենացս մէջ. ամենակալ Տէր:

« Զքեզ կ'օրհնեն Տէր՝ երկնքին բոլոր հրեշտակները, եւ ամենայն փառաւորութիւն քուկդ է յաւիտեանս. ամէն »:

Երրորդ Տեղ անենակալէն վերջը կասուի նաեւ այն աղօթքին միւս կտորը, « Աղաչեմ եւ ինդրեմ ի քէն Տէր » եւ այլն, յետոյ սովորական քարոզն ու աղօթքը, եւ անկից ետեւ ողբաձայն եղանակով « Ողորմեա ինձ Աստուած » սաղմոսը, ընթերցուածները, եւ Ղուկասու աւետարանէն մեղաւոր կնոջ պատմութիւնը, որ է այս.

Օր մի Յիսուս փարիսեցիներէն մէկուն տունը ճաշի հրաւիրուած լինելով՝ երբոր բազմած էր, քաղաքին մէջ մեղաւորութեամբն անուանի կին մի եկաւ այն տեղը՝ հետը մէկ շիշ ազնիւ եղ բերած. Յիսուսի ոտքին կողմը ետեւով կեցած՝ սկսաւ լալ ու արցունքովն ոտքերը թրջել. գլխուն մազերովը կորէր այն արցունքներն ու կհամբուրէր ոտքը, եղովն ալ կօծէր: Այն որ տեսաւ փարիսեցին՝ գայթակղեցաւ. ասաց մտքէն թէ Սա թէ որ մարդարէ մարդ լինէր, պէտք էր գիտնար թէ սով է՝ ինչպիսի կնիկ մարդ է իրեն մօտեցողը. վասն զի մեծ մեղաւոր է: Յիսուս դարձաւ՝ ասաց փարիսեցւոյն. Սիմոն, բան մի ունիմ քեզի ասելու: Մարդուն մէկը երկու հօգիտ առնելիք ունէր. մէկը պարտական էր իրեն հարկը դահեկան, միւսը յիսուն. եւ որովհետեւ փող չունէին որ վճարեն՝ երկուքին ալ ներեց թողուց պարտքը. այժմ դուն ասա, անոնցմէ ո՞րը աւելի սէր կ'ունենայ նորա վրայ: Փարիսեցին պատասխանեց. կարծեմ թէ նա՝ որուն պարտքը շատ էր: — « Ուղիղ դատեցար », շիտակ է կարած դատաստանդ, ասաց Յիսուս: Այդ կնիկ մարդը կոտեսնես. ես քու տունդ մտայ, ոտքս լուանալու ջուր չտուիր (ինչպէս որ հիւր ընդունողներուն սովորութիւնն է). սա արցունքովը թրջեց ոտքս ու մազերովը սրբեց: Դուն ինձի համբոյր մի չտուիր (գուցէ մեծութեանդ չվայլեցընելով). սա քանի որ եկեր եմ՝ ոտքս համբուրելէն չդագրիր: Դու լիս եղով չօծեցիր, սա անուշահոտ եղով օծեց: Անոր համար՝ հաւատա ինձի որ սորա այնքան մեղքերուն թողութիւն եղաւ:



որովհետեւ սէրը աւելի շատ է. վասն զի որուն որ տրուած թողութիւնը շատ է՝ շատ կսիրէ; որունն սր քիչ է՝ քիչ: Յետոյ դարձաւ ասաց կնիկմարդուն. թողութիւն տրուեցաւ քու մեղքերուդ: Քովիններն սկսան ասել իրենց մտքէն. Սա ո՞վ է որ մեղքերու թողութիւն կուտայ: Իսկ Յիսուս ամենեւին բանի սեղ չգնելով նոցա տարակուսանքը՝ ասաց կնիկմարդուն. Բու հաւատքդ փրկեց զքեզ. բարով երթաս:

Ի՞նչ սիրուն օրինակ ամենագութ մարդասիրութեանն Աստուծոյ, եւ որքան չքնաղ քաջալերութիւն զղջացեալ մեղաւորաց:

Յետոյ կկարգայ քահանայն ապաշխարողաց վերայ սրբոյն Բարսղի շարագրած աղօթքը. եւ մէկ երկու սաղմոս ալ ասուելէն վերջը՝ կառնու ապաշխարողները՝ եկեղեցիէն ներս կմտցընէ, կօրհնէ զանոնք եւ բոլոր ժողովուրդը ուրիշ երկար աղօթքներով, եւ կարճրկէ՝ որ պատրաստուին սուրբ պատարագին ատենը հաղորդուելու:

Երեկոյեան ժամերգութեան մէջ—որ միայն այսօր պատարագէն առաջ կլինի, — ընթերցուածները, սաղմոսներն ու աւետարանը կյիշատակեն Աբրահամու զոհ մատուցանելը Աստուծոյ իւր Իսահակ որդին՝ որ օրինակ էր Քրիստոսի խաչին վրայ պատարագուելուն. Յուդայի արած մատնութիւնը, եւ այլն: Իսկ պատարագի ընթերցուածն ու աւետարանը սուրբ Հաղորդութեան խորհրդոյն սահմանադրութեանը վրայ է: Աւետարանը արգէն լսեցիք երեկուան օրը:

այս սեղ յիշատակեմք ընթերցուածին գլխաւոր խօսքերը.

«Քանի անգամ որ այս հացը ուտէք, եւ այս բաժակը խմէք, կասէ Պօղոս առաքեալ, Քրիստոսի Տեառն մերոյ մահը յիշեցէք՝ մինչեւ նորա երկրորդ գալուստը: Այսուհետեւ ով որ անարժանութեամբ ուտէ այս հացը, եւ խմէ այս բաժակը, պարտական լինի Տեառն մերոյ մարմնոյն եւ արեանը: Թող ամէն մարդ առաջ փորձէ քննէ ինքզինքը, յետոյ ուտէ այն հացէն ու խմէ այն բաժակէն. վասն զի անարժանութեամբ ուտողն ու խմողը՝ ինքը իւր գառապարտութիւնը կուտէ ու կխմէ, որ Քրիստոսի մարմինը բանի սեղ չգներ: Անոր համար ալ է որ շատ հիւանդներ ու հիւանդոտ մարդիկ կան ձեր մէջ, եւ անոնցմէ ալ աւելի են արգէն մեռնողները»:

Այս խօսքերէն ալ կերեւի յայտնապէս՝ թէ որքան կսխալին բողոքականք՝ երբոր կարծեն թէ սուրբ Հաղորդութիւնը լոկ օրինակ է մարմնոյ եւ արեանն Քրիստոսի, եւ ոչ նոյն իսկ մարմին եւ արիւն Տեառն, ինչպէս որ մեք կհաւատամք:

Աւետարանէն վերջը կըացուի սեղանին վարագոյրը, եւ կատուի Հարսամբը, յետոյ պատարագը կշարունակուի մինչեւ Հայր մերին մօտ: Այն միջոցին կկարգայ քահանայն առ ժողովուրդն այն սրտաշարժ ու գեղեցիկ խրատը կամ քարոզը, որ ձառոցին մէջ տպուած է, եւ կսկսի այս խօսքով. «Լուարուք ինձ, եղբարք իմ»: Իսկ պատարագին վերջերուն արժանաւորները կհաղորդուին սուրբ խորհրդոյն:

Գամբ Ռանալուայի արարողութեանը :

Աւագ Հինգշաբթի երեկոյին Ռանալուայի Հանգէս կատարելու սովորութիւնը դրեթէ ամենայն քրիստոնեայ ազգաց մէջ կայ, թէպէտ եւ արարողութիւնները միակերպ չեն. որովհետեւ ոմանք միայն 12 քահանայից ու դպրաց ոտքերը կլուանան, ամանք 15 դպիր պատանեաց, ոմանք բոլոր ժողովրդեան, եւ այլն : Մեր Ռանալուային Հանգէսը սրբոյն եփրեմի Խուրին ասորոյ կարգի դրած ու շարագրածն է, զոր երանելի կաթուղիկոսն մեր Գրիգոր Վկայասէր ասորերէնէն թարգմաներ է, ի հարկէ բաց ի շարականներէն ու սովորական ազօթքներէն եւ քարոզներէն :

Փրկիչն մեր իւր չարչարանքէն ու խաչելութենէն առաջ կամենալով յայտնել աշակերտացն ու ամենայն քրիստոնէից իւր աստուածային անսպառ սէրը, եւ միանգամայն գործնական խրատ մի տալ նոցա խոնարհութեան եւ հեզութեան, տասուերկու առաքելոց (ասել է որ նաեւ Յուդայի) ոտքերը լուաց. եւ յետոյ ասաց. « Օրինակ մի ետու ձեզ, զի որպէս ես ձեզ արարի, եւ դուք առնիջիք ». — Այս մէկ օրինակ մի էր որ տուի ձեզի այս մտքով՝ որ ինչպէս ես ձեր ոտքը լուացի, դուք ալ իբրբու ոտքը լուանաք : Բայց այս եւս յայտնի բան է որ եթէ այս արարողութիւնը կատարուի միայն իբրեւ արտաքին Հանգէս, — ինչպէս որ շատ անգամ կպատահի դժբաղդաբար այսպիսի կարգադրութեանց մէջ, — ոչ Քրիստոսի Տեառն մերոյ հրամանը աեզը կերթայ, եւ ոչ արարողութիւնը իւր նպատակին կհասնի, որ է քրիստո-

նէական սէրը, անոխակալութիւնը, ներողամտութիւնը, խոնարհութիւնը, հեզութիւնը նորոգել եւ հաստատել քրիստոնէից մէջ՝ Քրիստոսի օրինակովը :

Սուրբ աւետարանիչն Յովհաննէս այսպէս կպատմէ Փրկիչին մերոյ իւր աշակերտաց ոտքը լուանալը : — Խորհրդաւոր ընթրիքէն, այսինքն սուրբ Հաղորդութեան խորհուրդը հաստատելէն առաջ, Տէրն մեր սեղանէն ելաւ՝ կասէ, վրայի հագուստը՝ վերարկուն մէկգի գրաւ, մէջքը ղենջակ (փեշքնալ) կապեց, կոնքի (յեյեհի) մէջ ջուր լեցուց, ու սկսաւ ծառայի մը պէս աշակերտացը ոտքերը լուանալ, լուանալէն ետքն ալ՝ մէջքի ղենջակին ծայրովն սրբել : Երբոր Պետրոսի ոտքը լուանալու եկաւ, զարհուրեցաւ առաքեալը . « Տէր, ասաց, դո՞ւն իմ ոտքս պիտի լուանաս ». այդ աստուածային ձեռքերդ որ երկինքն ու երկիրս ստեղծեր են, այդ ձեռքերն որ այնքան կոյրերու աչքերը բացեր են, այնքան խուլերու մունձերու ականջներն ու լեզուներն արձրկեր են, այդ ձեռքերն որ զիս ծովուն մէջ ընկղմած ժամանակս բռներ՝ վեր քաշեր են, այդ ձեռքերն որ ալէկոծեալ ծովուն սաստեր՝ ալիքները լեցուցեր են, դուն ատոնցմով իմ ոտքերս պիտի լուանաս : Յիտուս պատասխանեց թէ « Զոր ինչ եսս գործեմ՝ դու այժմ ոչ դիտես. բայց ապա դիտասջիր ». — Դուն այժմ չես հասկընար թէ ինչ մտքով է այս իմ արածս, բայց յետոյ պիտի հասկընաս : Պետրոս կտրուկ կերպով մը, ինչպէս որ բնութիւնն էր, ասաց. « Ոչ լուացես զտոս իմ յաւիտեան ». — Ոչ երբէք պիտի թողում որ դուն իմ

ոտքս լուանաս : Պատասխանեց Յիսուս . « Թէ որ դքեզ չլուանամ , ինծի հետ մասն բաժին չես ունենար » . այս ոտքերու լուացմունքը օրինակ է այն խղճմտանքի մաքրութեանը որ հարկաւոր է իմ նոր սահմանելու Զատիկս ճաշակելու համար . թէ որ գուն այս մաքրութիւնը չընդունիս , թէ որ սրտիդ մէջ չտպաւորուի այս խորին խոնարհութիւնը ' որոյ օրինակը կուտամ ես ձեզի , ոչ իմ աշակերտս մնալու արժանի կլինիս , եւ ոչ իմ մարմինս ու արիւնս ճաշակելու : Պետրոս առաքեալ ' նոյն կրակոտ բնութեամբը իսկոյն վրայ բերաւ թէ « Տէր , եթէ այդպէս է , ոչ թէ միայն ոտքս լուա , հտպա նաեւ ձեռքերս ու գլուխս » : Պատասխան տուաւ Տէրն մեր թէ « Լուացելոյն չէ ինչ պիտոյ ' բայց զի գոտան լուանայցէ » . — արդէն լուացուած մաքուր մարդուն հարկաւոր է միայն ոտքերը լուանալ ( ինչպէս որ սովորութիւն է ) ու այնպէս նստիլ սեղան . դուք ալ լուացուած մաքուր ( սուրբ ) էք , թէպէտ եւ ոչ ամէնքդ : Այս ետքի խօսքովը Յուդայի չար գիտաւորութիւնը գիտցածը կցուցընէր Տէրն մեր , եւ անունը չտալովը կուզէր զինքը զղջումի բերել : — Մեր Շնորհալի հայրապետը ուրիշ գեղեցիկ մեկնութիւն ալ կուտայ Յիսուսի այս խօսքին . ես որ Եկեղեցւոյ մարմնոյն գլուխն եմ ' լուացուելու կարօտութիւն չունիմ , վասն զի արդէն մաքուր եմ . բայց դուք ոտք էք , պէտք է մաքրուիք որ արժանի լինիք սրբութեամբ միանալու ձեր գլխոյն հետ .

« Գլխոյն ընտրեալ հօտին փոքու

Սասաէր զիտրհուրդն ոչ գիտելոյ .

Որով գառնայր եւ հնազանգէր ,  
 Զոտս եւ ըզգլուխս մաքրել մաղթէր .  
 Գլխոյս , ասէ , չէ ինչ պիտոյ  
 Լուացումըն ջրոյ , զի լուացեալ է .  
 Ուիցըզ պէտք են մաքրութեան ,  
 Յօգիլ ի գլուխըս սըրբութեամբ » :

Առաքելոց ոտքերը լուանալէն յետոյ վերարկուն առաւ , նստաւ նորէն սեղան , եւ հասկըցուց նոցա իւր խոնարհական գործողութեան խորհորդը . « Գիտէք զինչ արարիդ ձեզ » ասաց . — գիտէք ինչ բան էր որ արի ձեզի , կամ ինչ մտքով ձեր ոտքերը լուացի . Դուք ինծի վարդապետ ու Տէր անունները կուտաք . եւ աղէկ կանէք , որովհետեւ յիրաւի ձեր Տէրն ու վարդապետն եմ . արդ եթէ ես ձեր ոտքերը լուացի , դուք ալ պէտք է իրարու ոտքը լուանաք . դուք ալ պէտք է որ ինծի պէս խոնարհութեամբ ծառայէք իրարու : Այս օրինակ մի էր որ ես տուի ձեզի . պէտք է որ ինծի հետեւիք : Լաւ գիտցէք այս բանս որ ծառան իւր տիրոջմէն մեծ չէ , առաքեալը ' զրկուած մարդն ալ ' զինքն զրկողէն մեծ չէ . ուրեմն պէտք է խոնարհ լինիք ինծի պէս : Երանի ձեզի եթէ այս բանս լաւ հասկընաք ու գործով ալ կատարէք . « Եթէ զայս գիտիցէք , երանելի եւս էք ' եթէ առնիցէք զայս » :

Այժմ տեսնեմք թէ ինչ կերպով կկատարէ այսօր մեր սուրբ Եկեղեցին Ոսնալուայի յիշատակը :



Երեկոյեան ժամուն ատենը սրբութիւնն ի բազմոցի դբուած, եկեղեցականները զգեստաւորուած՝ ատեան կեննեն ու ողբաձայն եղանակով կերգեն « Ողորմեա ինձ Աստուած » սաղմոսը, որոյ մէջի այս տունը աւելի եւս կյարմարի հանդիսին. « Յօգեա յիս մշակաւ եւ սուրբ եղէց. լուա եւ քան զձիւն սպիտակ եղէց ». — Մշտիկով (խոտով կամ փոքրիկ աւելով) ջուր սրսկէ վրաս որ մաքրուիմ ի մեզաց. լուա զիս՝ եւ ձիւնի պէս սպիտակ լինիմ շնորհօքդ :

Յետոյ կերգեն այս պարզ եւ սիրուն շարականը.

« Այսօր կանգնեցաւ աւազան մկրտութեան ի թողութիւն մեզաց մերոց. » — Այսօր սահմանուեցաւ մկրտութեան աւազանը՝ մեր մեզաց թողութեան համար. այսինքն ոտնալուայի լուացարանը դբուեցաւ մէջտեղը՝ օրինակ մկրտութեան սուրբ աւազանին, որով մեր մեզաց թողութիւնը կընդունիմք : — Տգէտ աստուածաբաններէն ոմանք ծուռ հասկընալով շարականին այս խօսքը, եւ կարծելով թէ մեր Եկեղեցին այնպէս կհաւատայ որ իբր թէ այսօր հաստատեր է Քրիստոս մկրտութեան խորհուրդը, եւ ոչ թէ իւր մկրտուած օրը, կամ երբոր յարութենէն ետեւ ասաց առաքելոց՝ թէ « Մկրտեցէք զնոսա յանուն չօր եւ Որդւոյ եւ Հօգւոյն սրբոյ », — յանգսնէր են սրբագրել (դուն հասկըցիր խանգարել եւ ապականել) մեր սուրբ Հայրապետին ուղղութեամբ ասածը. ուստի իրենք կտպեն ու կերգեն այն տունը այսպիսի փոփոխութեամբ. « Այսօր կարգեցաւ օրինակ խոնարհութեան ի յուղղութիւն վարուց մերոց » :

Միւս տներն ասոնք են, որ ինքնին բացայայտ են եւ անկարօտ աշխարհաբառ թարգմանուելու.

« Այսօր Տէրն մեր լուանայր զոտս աշակերտացն, եւ պատուիրէր զայս ասելով :

« Մի ոմն ի ձէնջ, եղբարք, մատնելոց է զիս ի մահ, եւ որոշի յաշակերտացդ :

« Զայն լուեալ Պետրոսի՝ ակնարկէր առ Յովհաննէս, հարցանել թէ ո՞վ իցէ :

« Բանն զոր ասաց Յիսուս՝ տրտմեցոյց զիւր զաշակերտան, եւ խռովեցան ամենեքեան » :

Յետոյ կկարգայ եպիսկոպոսը կամ քահանայն ընդարձակ աղօթք մի, եւ ամանով ջուրը կառնուլ՝ կանքին մէջ խաչաձեւ կլեցընէ՝ ասելով սաղմոսին այս տունը. « Զայն Տեառն ի վերայ ջուրց, եւ Աստուած փառած որոտաց, եւ Տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց » : Այնուհետեւ կկարդացուին զանազան ընթերցուածներ, յորդորակ մի սիրոյ, եւ Յովհաննու աւետարանէն ոտնալուայի պատմութիւնը : Աւետարանէն ետքը եղանակաւ քարոզ, « Աստուած մեծ եւ սքանչելազործ », եւ մէկ երկու տաղ կամ գանձ :

Երգերէն վերջը իւզոյն կամ կարագին օրհնութիւնը կկատարուի՝ նախ առանձին աղօթքով, եւ ապա տեառնագրութեամբ ի վերայ ջրոյն եւ իւզոյն՝ ասելով երեք անգամ, « Օրհնեսցի եւ սրբեսցի ջուրս եւ իւզս այս նշանաւ » եւ այլն : Այս իւզը օրինակ է այն իւզոյն՝ որով առաքելաբ կօծէին շատ հիւանդներ ու կբժշկէին. եւ օրինակ միայն լինելը եւ ոչ թէ իրօք

խորհրդական իւր կամ մեռոն՝ անկից ալ յայտնի է որ կարագ է ոտնալուայինը, եւ ոչ ձկն կամ բալասան:


Այնուհետեւ եպիսկոպոսը կամ պատուաւոր քահանաներէն մէկը կզգեստաւորուի, մէջքը զենջակ մի կկապէ, կնստի ծնկան վրայ, եւ ամենուն ոտքը կլուանայ՝ մեծէն մինչեւ փոքրը, կամ թէ՛ ինչպէս այժմ՝ շատ տեղ սովորութիւն եղած է՝ տասուերկու դպրի ոտք միայն կլուանայ, եւ ամէն մէկուն ոտքը լուանալէն ու սրբելէն ետքը՝ օրհնուած կարագէն կառնու քիչ մը, կքրսէ ոտքին վրայ՝ ի նշան տան կուսանաց իւրոյն, Աստուծոյ պատուիրանաց լուսոյն, օծման շնորհացն Աստուծոյ՝ հոգւով հեղութեան եւ խոնարհութեան եւ այլն: Նոյն միջոցին դպիրները կերգեն «Վերաձգողն երկնից» կամ «Այսօր անձառ» շարականները: Իսկ ոտքերնին լուանալ տուողները մի առ մի կհամբուրեն աւետարանն ու սուրբ խաչը, յետոյ լուացողին աջը, եւ կզառնան իրենց տեղը:

Երբոր լուացմունքը կվերջանայ, կկարգայ եպիսկոպոսը կամ քահանայն նոյն ոտնալուայի աւետարանին մնացեալ մասը, եւ այնպէս կլմըննայ այն գեղեցիկ հանդէսը:

Լատինացւոց սովորութիւնն այս է որ ոտնալուայի հանդէսը եպիսկոպոսը կկատարէ, ինչպէս ի Հռովմ պապը, լուանալով 13 աղքատ եկեղեցականաց կամ հասարակ աղքատաց ոտքը: Տասուերկուքին տեղը 13 հոգւոյ ոտք լուանալուն պատճառ այս կուտան որ իբր թէ Պօղոս առաքելոյն տեղն ալ մէկը գտնուի. ուրիշները ուրիշ մեկնութիւններ ալ կուտան: Սովո-

րութիւնն այնպէս է որ այն 13 աղքատաց մէկ մէկ ձեռք ճերմակ հագուստ կհագցընեն, եպիսկոպոսին ծախքովը: Աղքատները կարգաւ նստած կլինին. եպիսկոպոսը կերթայ ամէն մէկուն դիմացը, ծնկի վրայ կուգայ, առջեւը կըբերեն ջրի ամանն ու կոնքը, աղքատին աջ ոտքը կլուանայ, կսրբէ, կհամբուրէ. մէկ ոտկի կամ արծաթ դրամ ողորմութիւն կուտայ, ու կանցնի անոր քովինին ոտքը լուանալու նոյն կերպով, մինչեւ որ բոլորը կաւարտի:

Շատ երկար կլինէր մեր այսօրուան խօսակցութիւնը՝ եթէ բոլոր հանգէսներն ու արարողութիւնները տեղն ի տեղը բացատրել ուղէինք: Բայց յուսամք թէ այսքանս ալ բաւական համարին մեր ժամասէր ազգայինք, եւ անպտուղ չանցընեն այսպիսի մեծ ու խորհրդաւոր օրը, յորում այսքան սրտաշարժ ու շքեղ հանգէսներով կտօնէ սուրբ եկեղեցին Քրիստոսի Տեառն մերոյ առ մարգիկ ունեցած անբաւ սիրոյն գեղեցիկ յիշատակները. կսրբէ իւր զվջացեալ ապաշխարող զաւակաց արտօնները, կհաշտեցընէ զնոսա Աստուծոյ հետ, կըազմեցընէ ամենասուրբ Հաղորդութեան անմահարար սեղանը, եւ կպատրաստէ արժանաւորապէս տօնելու նաեւ Քրիստոսի փրկագործ Չարչարանաց, Խաչելութեան, Թաղման եւ Յարութեան խորհուրդներուն ցանկալի տարեդարձը ի փառքս Փրկչին մերոյ Աստուծոյ:



ԾԱՆՈՒՅՈՒՄՆ.

Որովհետեւ այս հրատարակութեանս նիւթերը երկու գլխաւոր խումբ կբաժնուին, մէկը *kyrosialian* եւ միւսը *arsuffin*, արժան դատեցինք՝ անուններով եւս զանազանել ասոնք իրարմէ. եւ կրօնականներուն վրայ աւելցնել ՔԱՐՈՋ անունը: — Յայտնի բան է որ այս զանազանութեամբ մեր աշխատասիրութեան ոչ նպատակը կփոխուի, ոչ լեզուն եւ ոչ ոճը. վասն զի *furnq* անուանածներս ալ՝ գէթ ըստ մեծի մասին՝ պիտի լինին դարձեալ ընտանեկան ոճով պատմուած հոգեշահ պատմութիւններ, եւ առանց ճարտասանական զարգարանքներու տրուած խրատներ ըստ աւուրց պտտշահի. իսկ *rus-*  
*ian*ները կմնան նոյնպէս պարզ եւ դիւրիմաց ոճով եղած բացատրութիւններ առ հասարակ ուսումնական, պատմական, աշխարհագրական, եւ ուրիշ արտաքին օգտակար տեղեկութեանց:

ԳԱՐ. ԵՊ. ԱՅՎԱԶԵԱՆ.



ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ.

Աւագ Երկուշաբթի.  
Աւագ Երեքշաբթի.  
Աւագ Չորեքշաբթի.  
Երեսադեմի առոււմն ու մասնաբն կործանումը.  
Կոստանդնուպոլսոյ առոււմն յՕսմանեանց.  
Աւագ Հինգշաբթի.

ՊԱՏՐԱՍՏԻ Ի ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

Աւագ Ուրբաթ.  
Չատիկ տուրք Յարութեան Տեառն.  
Համբարձումն.  
Հոգեգալուստ.  
Վարդավառ.  
Վերափոխումն.  
Սուրբ Խաչ.  
Ծնունդ եւ Յայտնութիւն Տեառն.  
Տեառներդատաւ.  
Բուն Բարեկենդան.  
Սուրբ Հռիփսիմեանք.  
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ.  
Որդիք եւ բոռունք սրբոյ Լուսաւորչին.  
Մեծն Ներսէս Պարբե.  
Սուրբ Սարգիս Չորավար.  
Սուրբ Մինաս.  
Սուրբ Անտոն ճգնաւոր.  
Յօր երանելի.  
Քաղէոս առաքեալ, Ս. Սանդուխտ կոյս, եւ Ս. Շուշանիկ.  
Ժամ եւ Ժամերգութիւն.

Երկինք.  
Արեւն ու Մոլորակները.  
Ջերմութիւն եւ Ջերմաչափ.  
Մեաեորագիտութիւն, կամ Գուշակութիւնք օդոց.  
Մրջինք եւ Մեղուք.  
Տնտեսութիւն.  
Եզրպատոսի հնութիւնները, եւ այլն:

Գին իւրաքանչիւր տարւակի 20 ֆոխ.



